

and age composition in the EU and CIS countries, presents the load and compensation coefficients in the CIS countries and the ratio of average pension and average wages in European countries, the MMGPI and the Global AgeWatch Index were analyzed, and as a result of which, conclusions have been made and recommendations have been presented.

ՄԱՆԵ ԵԳԱՆՅԱՆ

Բանկային գործ, բակալավրիատ,
4-րդ կուրս

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. իրավաբանական անձ, ՀՀ բանկային համակարգ, վարկունակության գնահատման կառուցակարգեր

Ամփոփելով իրավաբանական անձանց վարկունակության գնահատման առկա կառուցակարգերը՝ կարծում ենք, որ արդի պայմաններում ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, նախքան վարկի տրամադրումը, կատարում են բավականին խորը և համակողմանի վերլուծություն: Այնուամենայնիվ, մոտ ապագայում հնարավոր է հասնել այդ կառուցակարգերի կատարելագործմանը, ինչի միջոցով բանկի վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը կհասնի նվազագույնի:

Իրավաբանական անձինք սեփական կապիտալի շահութաբերությունն ավելացնելու նպատակով իրենց գործունեությունն իրականացնում են՝ օգտագործելով նաև փոխառու միջոցներ (հիմնականում բանկային վարկերի տեսքով): Առևտրային բանկերը, նախքան վարկերի տրամադրումը, վերլուծություն են կատարում՝ տվյալ վարկի տրամադրման նպատակահարմարությունը բացահայտելու համար:

Իրավաբանական անձանց վարկունակության գնահատումը ՀՀ առևտրային բանկերն իրականացնում են՝ կիրառելով գրեթե նույն կառուցակարգերը. բիզնեսի վերլուծություն, համակողմանի ուսումնասիրություն կազմակերպության ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ, և վերջիններիս համադրման արդյունքում հաճախորդի վարկունակության վերջնական գնահատում:

Վարկունակության գնահատման հիմնական սկզբունքներն են.

- ֆինանսական վիճակի վերլուծության համար կարող է հիմք հանդիսանալ միայն պատշաճ հիմնավորված և ուսումնասիրված տեղեկատվությունը,
- ֆինանսական վիճակի վերլուծությունը կատարվում է տվյալ պահի և նախորդ ժամանակաշրջանի տվյալների ուսումնասիրության հիման վրա, ինչը հնարավորություն է տալիս գնահատելու ֆինանսական վիճակի փոփոխությունները ժամանակի մեջ (անցյալում) և կանխատեսումներ կատարել:

Վարկառուի վարկունակության գնահատման հիմնական ֆինանսական ցուցանիշներն են.

1. կապիտալի համարժեքության ցուցանիշ,
2. իրացվելիության ցուցանիշ,
3. վարկի մարման գումարի ծածկման գործակից,
4. շահութաբերության ցուցանիշ,
5. լներեջի ցուցանիշ:

Ոչ ֆինանսական ցուցանիշների մեջ հաշվի են առնվում՝

- կազմակերպության գործարար համբավը,
- մասնակիցների գործարար համբավը,
- շուկայում կազմակերպության գրաված դիրքը,
- կազմակերպության դրական վարկային պատմությունը,
- կազմակերպության ռիսկայնության մակարդակը,
- մատակարարների և սպառողների բազմազանեցվածության մակարդակը:

Վերոնշյալ ցուցանիշներն ուսումնասիրելուց հետո կազմակերպություններին տրվում է համապատասխան դաս:



Գծապատկեր 1. Վարկառուների վարկունակության մակարդակները

Յուրաքանչյուր վարկատու կազմակերպություն ինքնուրույն է որոշում վարկունակության գնահատման գործակիցների՝ իր համար ընդունելի մեծությունը: Սակայն հիմնականում, եթե վարկառուի ցուցանիշները չեն բավարարում համապատասխան սահմանաչափերը, այնուամենայնիվ, վարկունակության գնահատման վերջին՝ վարկային կոմիտեի կողմից վարկի տրամադրման վերաբերյալ որոշման ընդունման փուլում, հաճախորդի վարկունակությունը գնահատվում է դրական: Ուստի, անհրաժեշտ է մշակել այնպիսի կառուցակարգեր, որոնք հնարավորինս կկրճատեն և նույնիսկ կբացառեն սուբյեկտիվ գործոնի առկայությունը:

Քանի որ այսօր իրավաբանական անձանց մեծ մասի հաշվապահական հաշվեկշիռը չի արտացոլում իրական պատկերը, ուստի վարկային գործա-

կալը, որը զբաղվում է տվյալ վարկառուի վարկունակության գնահատմամբ, հաշվեկշռի հոդվածների ճշգրտությունն ուսումնասիրում է համակողմանիորեն:

Դեբիտորական պարտքերի չափը հստակ իմանալու համար առանձին ուսումնասիրվում են բոլոր դեբիտորները, հնարավորության դեպքում պարզվում են վերջիններիս կրեդիտորական պարտքերը՝ համեմատություն անցկացնելու նպատակով:

Դրամարկդի և անձնական խնայողությունների տվյալների հավաստիությունը ցույց տանք օրինակի միջոցով. դիցուք՝ հաճախորդի պնդմամբ՝ օրական միջին շրջանառությունը կազմում է 1 մլն դրամ, հումքը վերջին անգամ ձեռք է բերվել 10 օր առաջ, այսինքն՝ հաճախորդը դրամարկդում և անձնական խնայողությունների տեսքով ունի ոչ թե 10 միլիոն դրամ, այլ ավելի փոքր գումար: Սա նշանակում է, որ հաճախորդը սխալ տվյալներ է ներկայացնում:

Ապրանքանյութական պաշարների մնացորդը ճշգրտելու համար կատարվում է ընտրանքային ստուգում: Ընտրանքն ընդունվում է այնպես, որ շեղվելու հնարավորությունը փոքր լինի:


Կրեդիտորական պարտքն այն հոդվածն է, որի հետ կապված սխալները գերակշռում են: Դրանք բացահայտելու համար կազմակերպության գործունեությունն անհրաժեշտ է ուսումնասիրել ամենասկզբից՝ նախնական կապիտալին գումարելով յուրաքանչյուր տարվա շահույթը, որը, ըստ հաճախորդի, դրվել է շրջանառության մեջ: Եթե ստացված տվյալների և հաճախորդի ներկայացրած թվի միջև առկա են զգալի տարբերություններ, ապա նշանակում է, որ հաճախորդը թաքցնում է իր կրեդիտորական պարտավորությունները: Դա կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ վարկառուի վարկարժանության հարցում: Անհրաժեշտ է հնարավորինս ճշգրիտ կատարել հաշվարկը՝ ճեղքվածքն առավել հստակ իմանալու համար:

Ուստի, որպեսզի վարկունակության գնահատումն իրականացվի հնարավորինս օբյեկտիվ, անհրաժեշտ է հարկային դաշտի վերափոխում. եթե բոլոր կազմակերպություններն ունենան հստակ կազմված հաշվապահական հաշվեկշիռ, ապա վարկունակության գնահատումը այլևս լուրջ խնդիր չի լինի առևտրային բանկերի համար:

Ոլորտը զարգացնելու համար անհրաժեշտ է նախ իրականացնել հարկային համակարգի բարեփոխում: Սրանով ավելի կմոտենանք միջազգայնորեն կիրառվող կառուցակարգերին, քանի որ զարգացած երկրներում վարկունակության գնահատման համար չեն կատարվում բիզնեսի այնպիսի վերլուծություններ, ինչպիսիք ներկայումս կիրառվում են մեր երկրում: Վարկային գործակալները բոլոր վերլուծությունները կատարում են՝ ուսումնասիրելով միայն հաճախորդի հաշվեկշիռը, որը կազմված է առավելագույնս ճշգրիտ:

2017 թ. վերջին և 2018 թ. տարեսկզբին իրավաբանական անձանց տրամադրված վարկերն ըստ ճյուղերի ներկայացնենք գծապատկեր 2-ի միջոցով:

Ինչպես երևում է գծապատկերից, ամենամեծ տեսակարար կշիռն ունեն արդյունաբերության և առևտրի ոլորտում տրամադրված վարկերը: Իրավաբանական անձանց տրամադրված ընդհանուր վարկերի մեջ չաշխատող ակտիվները կազմում են 5.06%: Սրա մեջ մեծ տեսակարար կշիռն ունեն արդյունաբերության (1,14%) և առևտրի (0,97%) ճյուղերում տրամադրված վարկերը:



Գծապատկեր 2. Իրավաբանական անձանց տրամադրված վարկերն ըստ փնտեսության ճյուղերի (մլն ՀՀ դրամ)

Քանի որ նշված ճյուղերում տրամադրվող վարկերն ունեն աճի միտում, անհրաժեշտ է ավելի խորը ուսումնասիրել տվյալ ճյուղերում գործունեություն ծավալող կազմակերպությունների վարկունակությունը՝ հաշվի առնելով ճյուղի առանձնահատկությունները, որպեսզի չաշխատող ակտիվների ծավալը հասնի նվազագույնի, քանի որ կան այնպիսի ոլորտներ, որոնք բավականին ռիսկային են, և դրանց վերլուծությունը մյուս ճյուղերին հավասար, գրեթե անհնար է։ Վերջիններիս համար պետք է ապահովվի նաև վարկային ապահովագրություն, որպեսզի ռիսկային ոլորտ ներկայացնող իրավաբանական անձ հաճախորդը, գործունեությունը ձախողելու դեպքում, ստիպված չլինի ամբողջությամբ կրելու վարկային ռիսկը, այլ ապահովագրական ընկերությունը իր վրա վերցնի վարկի մարումը։

Ուսումնասիրելով ՀՀ առևտրային բանկերի կողմից կիրառվող իրավաբանական անձանց վարկունակության գնահատման կառուցակարգերը, համեմատելով դրանք միջազգային փորձում ընդունված սկզբունքների հետ և հիմնվելով մեր իրականացրած վերլուծությունների վրա՝ առաջարկում ենք.

1. Օրենսդրական դաշտի փոփոխություն կատարել՝ հարկային համակարգն առավել բաց դարձնելու համար։ Անհրաժեշտ է, որ կազմակերպություններն ունենան առավելագույնս հստակեցված հաշվապահական հաշվեկշիռ։
2. Տնտեսության տարբեր ճյուղերում գործող կազմակերպությունների վարկունակությունը գնահատել՝ հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները։ Օրինակ, եթե առևտրի ոլորտում աշխատող կազմակերպությունները շահույթ են ստանում կարճաժամկետում, ապա գյուղատնտեսության ոլորտում արդյունքները ստացվում են միայն երկարաժամկետում։ Ուստի, նպատակահարմար չէ բոլոր ճյուղերը գնահատել միևնույն չափանիշներով։

3. Առևտրային բանկերի կողմից իրականացվող վարկավորման գործընթացում կատարել կառուցվածքային փոփոխություններ, որպեսզի մեկ վարկային գործակալը չգրադվի ամբողջ վարկային գործընթացով: Այն հնարավորություն կտա բացառել վարկային գործակալի սուբյեկտիվ մոտեցմամբ պայմանավորված վարկունակության գնահատումը:
4. Ստեղծել իրավաբանական անձանց վարկունակության գնահատման անկախ կազմակերպություն, որը չի ունենա վերլուծության ենթարկվող կազմակերպության տվյալները: Ինչպես նաև կատարելագործել վարկունակության գնահատման ավտոմատացված համակարգը, որպեսզի վարկային կոմիտեի քննարկման անհրաժեշտություն առաջանա միայն առանձնահատուկ խոշոր վարկերի դեպքում, իսկ մնացած վարկերի վարկունակությունը գնահատվի ավտոմատ համակարգի միջոցով:
5. Իրավաբանական անձանց համար ստեղծել վարկային գիծ, որը կիրառվում է ֆիզիկական անձանց վարկավորման բնագավառում:
6. Իրականացնել վարկային ապահովագրություն, որը հատկապես կարևոր է ռիսկային ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների համար:
7. Նոր ստեղծվող կազմակերպությունների վարկունակության գնահատման համար սահմանել ավելի խիստ գործոններ, սակայն նրանց ամբողջովին չգրկել վարկավորման հնարավորությունից:

Այսպիսով, ամփոփելով իրավաբանական անձանց վարկունակության գնահատման առկա կառուցակարգերը՝ կարծում ենք, որ արդի պայմաններում ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, նախքան վարկի տրամադրումը, կատարում են բավականին խորը և համակողմանի վերլուծություն: Այնուամենայնիվ, մոտ ապագայում հնարավոր է հասնել այդ կառուցակարգերի կատարելագործմանը, որի արդյունքում բանկի վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը կհասնի նվազագույնի:

МАНЕ ЕГАНЯН

СОВЕРШЕНСТВОВАНИЕ МЕХАНИЗМОВ И ИНСТРУМЕНТОВ ОЦЕНКИ КРЕДИТОСПОСОБНОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ АРМЕНИИ

Ключевые слова: юридическое лицо, банковская система РА, механизмы оценки кредитоспособности.

Обобщая существующие механизмы в практике кредитоспособности юридических лиц, мы полагаем, что в нынешних условиях действующие в Армении коммерческие банки проводят довольно тщательный и всесторонний анализ перед кредитованием. Тем не менее, в ближайшее время возможно добиться улучшения этих механизмов, и, таким образом, доля неработающих кредитов в кредитном портфеле банка уменьшится и достигнет минимума.

MANE YEGANYAN

IMPROVING THE MECHANISMS AND TOOLS FOR ASSESSING THE CREDITWORTHINESS OF LEGAL ENTITIES IN COMMERCIAL BANKS OF ARMENIA

Key words: legal entity, banking system of RA, credit rating mechanisms.

Summarizing the existing mechanisms in the practice of creditworthiness of legal entities, we believe that under current conditions commercial banks operating in Armenia perform a rather thorough and comprehensive analysis before lending. Nevertheless, in the near future it is possible to achieve the improvement of these mechanisms, and thus, the share of non-performing loans in the bank's credit portfolio will decrease and reach to a minimum.

ԱՆԻ ԵՂՈՅԱՆ

Արժեթղթերի շուկայի վերլուծություն և
կառավարում, բակալավրիատ, 2-րդ կուրս

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, հաշվարկային արժեք, արժույթային տատանումներ, բազմազանեցում (դիվերսիֆիկացում), ներդրումային պորտֆել

Ֆոնդերը կարող են ներդրումներ կատարել միայն այն արժեթղթերում, որոնք հստակորեն թույլատրված են օրենքով: Դրանք ներառում են տեղական և օտարերկրյա կառավարությունների և ընկերությունների կողմից թողարկվող պարտատուները և բաժնեպատկերները: Գործում են քանակական սահմանափակումներ ըստ թողարկողների, ոլորտների մակարդակի, գործիքի իրացվելիության և ըստ գործիքների խմբերի: ՀՀ-ում կենսաթոշակային ֆոնդերը ներդրումներ են կատարում հիմնականում պարտատուներում, որը պայմանավորված է տեղական շուկայում առկա գործիքների սակավությամբ: Եթե պարտադիր ֆոնդերի ակտիվների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն ավանդները, պարտատուները, ապա կամավոր ֆոնդերի դեպքում միայն պարտատուներն են մեծ բաժին կազմում: Կենսաթոշակային ֆոնդերը կարևոր դեր և նշանակություն ունեն տնտեսության համար: Դրանք լուծում են սոցիալական խնդիրներ և տնտեսությունն ապահովում են երկար փողերով՝ նպաստելով տնտեսական աճին:

2014 թվականից ՀՀ-ում ներդրվեց բազմաստիճան կենսաթոշակային համակարգ: Մինչև այդ գործում էր միայն մեկ կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ («Կապիտալ Ասեթ Մենեջմենթ», որն առաջինը Հայաստանում գրանցվեց որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ): Նման համակարգի ներդրումը մի կողմից առաջ բերեց նոր ֆինանսական ինստիտուտների ներդրում, իսկ մյուս կողմից՝ ընդդիմադիրների մեծ զանգված: «Հայաստանում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման մասին» օրենքի համաձայն՝ բազային նվազագույն կենսաթոշակը հավասարվում է